

## ՀԱՅԳԻՏԱԿ

**ՇԱՏ** մի բանասերը գրեցին Հայաստանի մասին, և վերջերս նաև հրատարակեցաւ մեր Բաշմաշկին մէջ ուրիշ նոր քննադատութիւն մի մի և նոյն նիւթոյն վրայ. սա թէև չեմք գիտեր որ յետինն լինի, բայց յայտնի է թէ մինչև ցարդ եղած ուսումնասիրութեանց մէջ քննարկագոյնն է, թէ և շատ համառօտ:

Բանիրուն ուսուցչապետն Գեղա իւր այս պատուական ուսումնասիրութեան մէջ կը գրէ. « Ի վեր քան զամենայն՝ բուսաբանից փափաքը պիտի շարժէին այն թերթերն, որոնք՝ չորցուցած բուսոց կարգաւորեալ հաւաքածոյի մի մէջ՝ կը բովանդակեն յիսնեակ մի բոյսեր, իւրաքանչիւր իրենց անուամբ, զորս Պ. Խոսչապաշեան ուսուցիչն՝ ուշիմ՝ պատանի աշակերտաց հետ միասին, հաւաքեր է 1890-ին Տրապիզոնի շրջակայ գաւառերն և լեռներն »: Գուցէ այս չորս հինգ տողերն ուրախացնեն Պ. Հմայեակ Խոսչապաշեանը. բայց գուցէ միտ Տրապիզոնեցի ազգային ուսումնական ակմբին անդամօց այնչափ ախորժելի պիտի չլինին, քանի որ նոքա ամէնն ի միասին այս ազնիւ մտածութիւնն ունեցեր և ի գործ դրեր են: Ոչ, յարգելի քննադատ, այսպիսի գովելի աշխատութիւն մի չընծայենք լոկ նոյն ակմբին մէջ անձնաւորութեան, այլ քնդհանուրին. և եթէ ներսի՝ նպատակ մեր փոքրիկ դիտողութեան՝ կը յիշեցնէր աստ նոյն ազնիւ ակմբին գաւառաբարբառ նամակը, զոր ուղղած են իրենց պաշտելի Նահապետին (Հ. Ղ. Վ. Սևիշանի) յորելինի ասթիւ:

ՍԻՐՈՒՆ ՎԱՇԵՏԱՊԵՏ

Մեր<sup>1</sup> գիտունն ուրիշ<sup>2</sup> չիք<sup>3</sup> ու իսկի ինչիկ էլ չգիտիք ամմա կաշպետը մաշտիկը<sup>4</sup> շատ սիրիք կու ու հրաւիրք<sup>5</sup> կու. միւր էրէցն ու վարձապետը իրաց հետ ինչի մը խորաթէյնը

կու, կուժառ<sup>6</sup> մը կընէյին ունի, մէյ մ'էլ աշխ<sup>7</sup> էնգիէն քոնի մը հատ հոմառ<sup>8</sup> մաշտիկ էլ եկոն էնոց խառնրիկեցոն էսմոն<sup>9</sup> էսսմոն շիտակ միմ մէնէլիս ժ'եղաւ գիտցածնու չար<sup>10</sup> քոնի մը երդ էլ աստար<sup>11</sup> էստի է. տիւ միւր մէջէն մէկը ասաց թէ — ինտ օն. ցած աւուր կաշտըցած գրքին մէջ ինչ պէտքը բոնիւր (բանիւր) գրուածէինը հորսր<sup>12</sup> մաշտ կաշտայ<sup>13</sup> սիլտը լցուք կու արմընայ<sup>14</sup> կու: Էնտէն<sup>15</sup> վարձապետը մեզիկի ասգաւ<sup>16</sup> թէ « էն Յուշիկը ու Նուաշենը աստուած գրքերը է որ ձեզիկի տուի կաշտուշի հոմար, ահա էն միմ ու խրլազիտ մաշտուն շինածնին ին. ահա էս ասարի էնու<sup>17</sup> գրուշ<sup>18</sup> նիրենլուն խառնու տարին թոմիկու<sup>20</sup>, էսմոն ասին քաշքընցիք-ինչի մը հէտիէ<sup>21</sup> զրիկն կու, գուշք էլ հիմի ինչիկ մը զրիկը ուզիլ չէք թէ. « Ինցո՞<sup>22</sup> թէ չիք »: աստար<sup>23</sup> մէկը բերուն ու թիթեռնոն<sup>24</sup> պէս յիյ թաւնք մէկըս ինչ. դու<sup>25</sup> մէկս խալուս<sup>26</sup> մէկս առնիկոզ<sup>27</sup> մէկէլս էլ կապոնն ի վիւր գէշաք<sup>28</sup>, ծաղկոնիւր ծաղկուշի հոմար, փշուանին մաղուլուանին<sup>29</sup> մոն եկաք նէս ու նէն ինկար. միւր միջէն մէկս փիլունցն ու գէլթաթ էբիւր<sup>30</sup>, մէկէլս արեքուրիկն ու ծովծովուր ուրիշ մէկս էլ քոմի խոսն ու կաթնրուրիւրն, էլ ուրիշ շատ ու շատ ծաղկոնիւր, ծաղկոնէն էսին ներքի վիտ լաշտաթին<sup>31</sup> ափուգէն<sup>32</sup> խմբը մը փեռտեցաք ու գինիւր օնթէյնուս<sup>33</sup> մէջ լցաք հրնօքուս քուս կապեցաք ու հիմի քեզիկի զրկիք ունի: Գու շինած թղթերէկ ինչուկ հիմի շատ խըր տեսաք ու տեսնոնք պիտի կայաբընա<sup>34</sup> պէտքը բոն մը քեզի կոմակ<sup>35</sup> զրիկաք կու ամմա ինչ էնիք էօր սիլտեյնուս կայ ձեռուս. նուս չկայ. էնու հոմար էս միւր ասրերուն ծաղկոնիւրն միւր աղայնգընուս ու օրհնէք. նուն հիտ դապուլ էրէ. զէս պէտքը գիտացիւր է որ քու օնուկ իսկի մօցուելու չէ միւր իսկ հէյու ազգին մէջ:

Տրապիզոն, 5 / 17 մայիս 1890

Ս. Մեղաւորեան  
Վահան Կնչ. Խոյեան  
Հայեան Խոշաղեան  
Պեպրոս Մեղեան

Ստեփանոս Եւալեան  
Ստեփանեան  
Ս. Էմբեհեան  
Թ. Խան-Աւարեան

Որչափ որ Տրապիզոնի այս ուսումնական ազգային ակումբը նուիրած է նոյն բուսոց պատուական հաւարածոյն, բայց խուշապշեան զորա մէջ մեծ արդիւնք ունեցած է, քանի որ ինքն անձամբ՝ և ոչ թէ աշակերտաց աշակցութեամբ՝ Մալա գիւղին մէջ գտած և քննած է նոյն բոյսերէն մեծ մասը: Նմա նապէս շատ արդիւնաւոր են Մուրատ-Սա փայէլ. վարժարանի նախկին աշակերտ Պ. Պետրոս Մ. եռանդուն երիտասարդն, և Paul Sintenis. ասոնց հաւաքումն թէ և խուշապշեանին չափ բազմաթիւ չէ, բայց շատ գեղեցիկ է: Պ. Մկրտիչ Երեմեան անդամ նոյն ուսումնական ակումբին, այս ամէն ծաղիկները կարգաւորած է առանձին մեծ թերթերու մէջ և իւրաքանչիւր բուսակի առանձնը, վայրը և գոյնը խնամքով նշանակած է ամէն թերթի մէջ:

Եղիւնք հոս իւրաքանչիւր անձանց գտած բոյսերն, նոցա ուսումնական և գաւառական անունները և բնաշխարհը:

#### Պ. Պետրոս Մ.

Մամուռ տանձ. — լատ. *Crataegus*, գղ. *Alisier*. վ. Տրապիզոն (Սուրբ Փրկիչ վանք): Տրապիզոն. — լատ. *Cotaneaster Pyracantha*, — գղ. *Buisson ardent*. (անդ): Ցախ. — լատ. *Erica Arborea*, — գղ. *Bruyère arborescente*. (անդ):

Դրիւն. — լատ. *Blitum*, — գղ. *Blite կամ Blete*. վ. Տրապիզոն (քաղաք):

Քոսկ — խոտ (Քամիի խոտ). — լատ. *Geranium Columbinum*. Տրապիզ. (քաղաք):

Ըրդի. — լատ. *Asalea Pontica*. վ. Տրապիզ. (Սուրբ Փրկիչ վանք):

Լաշի. — լատ. *Rododendron Ponticum*. վ. Տրապիզոն (անդ):

Շան հառոց. — լատ. *Solanum nigrum*. վ. Տրապիզոն, (քաղաք):

Ինկաժաղիկ. — լատ. *Saxifraga cymbalaria*. — վ. Տրապիզոն. (Սուրբ Փրկիչ վանք):

Բոմբիլիխոտ (Բամբակխոտ). — լատ. *Holcus lanatus*, մի շքեղ նազելի բոյս. — վ. Տրապիզոն (քաղաք):

Խոյիլիկ. (այս ծաղիկը թիթեռնիկի շատ կը նմանի, աստի գուցէ հայրենակիցք կոչել են զայն խոյիլիկ՝ որ կը նշանակէ թիթեռնիկ). — լատ. *Clematis vitalba*. (անդ):

Խմիռ. — լատ. *Pteris aquilina*. (անդ): Կպլառ. — լատ. *Galium*. (անդ):

Ոճուրտ. — լատ. *Sambucus Ebulus*. (անդ):

Պղպեղխոտ. — լատ. *Polygonum Persicaria*. — վ. Տրապիզոն (ծովեզր):

Պիլի-Պիլի. — լատ. *Oxalis corniculata*. — գղ. *Oxalite cornue*. — վ. Տրապիզոն (քաղաք):

#### Պ. Հմայեակ խուշապշեան

Կարճտերեթի (... տերեթ). — լատ. *Acer Platanoides*. — գղ. *Plane*. — վ. Տրապիզոն (Մալա գիւղ):

Դրիւնկարի. — լատ. *Carpinus Duinensis*. — գղ. *Charme*. (անդ):

Առն քոսիկ. — լատ. *Hypericum*. (անդ):

Վաշիփոռչոր. — (անդ):

Կարճիւռչոր (ծաղիկ). — (անդ):

Կոցռ. — *Heracleum*? ոչ լատ. ծանօթ է սա Բատուայի բուսաբանութեան ուսուցչաջ. — (անդ):

Կսոնի. — լատ. *Staphylea pinnata*. — գղ. *St. Penné*. (անդ):

Մաղոյ (մորենի). — լատ. *Rubus nemorosus*. (անդ):

Յնձդի. — լատ. *Sorbus domesticus*. (անդ):

Կոչոտոռ. — լատ. *Bideus tripartita*. (անդ):

Զրխոտ. — Մա 'անձանծ ձիացած է Բատուայի բուսաբանից. (անդ):

Կոնիփ խոտ (Կանիփ խոտ). — լատ. *Lycopus europæus*. (անդ):

Միշոր բեր. — լատ. *Salvia glutinosa*. (անդ):

Կոսրի եղևն. — լատ. *Stachys silvatica*. (անդ):

Տարոն խոտ. — լատ. *Gentiana asclepiadea*. (անդ):

\*\*\*

Լափազա. — (անդ) :  
Կոպիկոն. — լատ. *Scolopendrium of-  
ficinale*. (անդ) :

Եղափրունց. — լատ. *Aspidium*. (անդ) :  
Արքիփիունց. — լատ. *Filix faemina*.  
(անդ) :

Փիփունց. — լատ. *Aspidium aculea-  
tum*. (անդ) :

Տրմեղաշ. — լատ. *Lysimachi punc-  
tata*. (անդ) :

Կմեղաշ կամ Տմետաշ. — լատ. *Salvia  
verticellata*. (անդ) :

Փիկնուղ. — լատ. *Spiraea aruncus*.  
(անդ) :

Խիփուկ. — լատ. *Argyrolobium caly-  
cinum*. (անդ) :

Մրմռնուկ. — լատ. *Silene*. (անդ) :

Խնկածաղիկ. — լատ. *Trifolium pro-  
cumbeus*. (անդ) :

Մլմուկ. — լատ. *Geranium*. (անդ) :

M. PAUL SINTENIS

Գազ. — լատ. *Acantolimon*. — վ. Կիւ-  
միւշիանէ (Սթամբուլ) :

(խնկածաղիկ). Անթառափ. — լատ. *He-  
lichrisum*. — վ. Կիւմիւշիանէ (Զիդանտս  
տաղ) :

Մեքրիկ. — լատ. *Satureja*. — Տրա-  
պիզոն (Ճէփլիլիք) :

Ունտաշ. — *Teleckia speciosa*. — վ.  
Տրապիզոն (Սումէլա) :

Հայրուսակի մեծարդոյ հեղինակն այս ա-  
մենայն բուսոց բուն բնավայրը չի յիշեր, այլ  
միայն գաւառը, « կը գտնուի ի Պոնտոս »  
ըսելով. վասն զի զայս կը պահանջէ արդէն  
այսպիսի երկասիրութիւն մը, ինչպէս կ'ընեն  
ընդհանրապէս ամենայն բուսաբանական բա-  
ւարանաց հեղինակը :

Վերջիջեալ ակըմբէն գտա՝ աղգին սիրելի  
Նահապետին, սոյն քաղաքէն Տիգրան Ալա  
Ղազարոսեան՝ ուղարկած է ցանկ մի գաւա-  
ռական անուանց բուսոց :

Յիշեալ ամենայն ծաղիկը, քայք և նիւ-

թական բուսաբանք, նորա յորելինի առթիւ  
եղած ընծայից մէջ շատ հաճոյական անցան :

Հ. Սիմոն Երեւ.

Ողերձին բառերուն մեկնադրանք.

1. Մենք. — 2. Ո՛ր, ոք, մէկը. — 3. Զեմք. —  
4. Մարդիկը. — 5. Յարգել, պատուել. — 6. խորհուրդ կազմել. — 7. Նայիս աշել, նայել. —  
8. Հարուստ. — 9. Այսպէս. — 10. Զափ. —  
11. Բահք. — 12. Երբոր. — 13. Կարդայ. —  
14. Զարմանալ. — 15. Այն ատենը. — 16. Ը-  
սաւ. — 17. Անոր. — 18. Գրել. — 19. Սկսել.  
— 20. Լիճնալ. — 21. Նուէր. — 22. Ինչպէս.  
— 23. Ըսենք. — 24. Քիթեռի. — 25. Ան-  
դին. — 26. Ասդին. — 27. Տափարակ ուղղու-  
թեամբ. — 28. Զերծուլ, ճամբայ ելնել. — 29. Տեսակ մը կակուղիկ փաւշ, այծերու ուտելիք.  
— 30. Բերաւ. — 31. Տեսակ մը թիփր, որոց  
ծաղիկներէն մեղր կը հաւաքեն մեղուք. — 32. Ափ.  
— 33. Գիրք. — 34. Եթէ կրնայինք. — 35. Նուէր,  
մասնաւորապէս հարսանեաց, հիւանդ-  
սեռի. — 36. Բաղոր :

ՄԱՏԹԷՈՍԻ ՆԱԽԱԵՏԱՐԱՆԸ

Հեռեկալ անակնունելի գիտութիւն կը կարգանք  
« *Sema'ne catholique* »-ի ապրիլ 10 քառոյն մէջ :

« Ուսուցիչն Աբրաո ծանուցած է այս վեր-  
ջին օրերս Լոնդրայի աստուածաբանական  
Դպրոցին, թէ Եգիպտոսի հետազոտութեանց  
համար (Egyptian exploration fund) սահմանուած գիտունք՝ հետազոտել են Բրի-  
տանական թանգարանի (British-Museum) հոգաբարձուց, առանց ուրիշ մանրամասնու-  
թիւններ յաւելլու, թէ քրիստոնէական հը-  
նութեան ամենէն հաշակաւոր գրքերէն մին  
գտնուած է յԵգիպտոս :

Յիշուի այս գիւտն արժանի է ամենայն  
մտադրութեան, վասն զի ժողովածոյ մ'է  
Յիսուսի խօսքերուն Logia Kyriaka, որ  
ըստ կարծեաց ամենայն գիտնոց՝ կանխած է  
քան զհրաւարականութիւն աւետարանաց :

Թէ արեւօք այս գտնուածը բուն նախա-  
ւետարանն է, թէ Պապիսա Կաթիկոսոսին  
գիրքն է, որ յի գարուս՝ անոր վրայ մեկ-  
նութիւն մը տուած էր, շուտով կը տեղեւ.